

ղէ մարդոց հոգիներուն մէջ եւ ով որ ամբողջութեամբ Աստուծոյ կը նուիրուի կրնայ կատարելութեան հասնիլ: Փիլոնի համաձայն, նմանօրինակ աստուած-տեսութիւն մը կարելի է նաեւ երկրային կեանքի ընթացքին:

Փիլոն մեծ ազդեցութիւն ունեցած է հետագայ Քրիստոնէութեան եւ Նոր-Պլատոնական փիլիսոփայական ուղղութեան վրայ: Միջնադարու Հայրաբանական շրջանի եկեղեցւոյ հայրերէն շատեր յիշատակած են Փիլոնի անունն ու գործը եւ օգտուած են անոր Հնգամատեանի այլաբանական մեկնութիւններէն:

• **Նոր-Պլատոնականութեան բարոյագիտութիւնը**

Նոր-Պլատոնականութեան հիմնադիր **Պլոտինոսի** բարոյագիտութիւնը կը վերաբերի փիլիսոփաներուն եւ անոնց որոշումներուն: Որպէս հիմնական հարցադրում Պլոտինոս կը կարենորէ փիլիսոփային տուած որոշումներու հետեւանքները, արդեօք անոնք կ'արգիլե՞ն թէ կը խթանեն փիլիսոփային ջանքերը: Հնադարեան դասական փիլիսոփաներուն նման, Պլոտինոս եւս, բարոյագիտութեան մէջ կը շեշտէր առաքինութեանց (յուն.՝ aretê) ձեռքբերումն ու մշակումը: Բաղդատելով Պլատոնի հետ, մեծ տարբերութիւն մը կը յայտնաբերուի, երբ Պլոտինոս, փիլիսոփան չի նկատեր պարզ քաղաքացի եւ ընկերային համայնքի մէկ մասը: Պլատոնի եւ դասական փիլիսոփաներուն համար յոյժ կարեւոր նկատուող, պետութեան հանդէպ ունեցած քաղաքացիներու ծառայութիւնները (նպատակ ունենալով պետութեան բարօրութիւնը), Պլոտինոսի համար նշանակութիւն չունէին:

Պորփիրիոս իր ուսուցչի, Պլոտինոսի կենսագրութեան մէջ կը յիշատակէ, որ ան մտադրած էր Պլատոնի իդէալական պետութեան օրէնքներով Պլատոնոպոլիս (Platonopolis) անունով նոր քաղաք մը հիմնել: Այս գաղափարը սակայն կարելի չէ գտնել Պլոտինոսի առկայ երկերուն մէջ: Ընհակառակն, ւելի ծանօթ է Պլոտինոսի մէկ միտքը, որ՝ *«փիլիսոփայական ապրելակերպի նպատակը՝ դէպի Առաջնամիակը թռիչքով փրկութիւնն է, բաժնուելով ա՛յն բոլորէն, որ այստեղ է»:*

Պլոտինոսի համաձայն, անհատի մը բարօրութիւնը, նոյնիւնքն անոր հոգիի բարօրութիւնն է, որովհետեւ միայն հոգին կը ներկայացնէ անձը: Այս իմաստով, եթէ մարմինը, որ միայն արտաքինապէս եւ միայն ժամանակաւորապէս անձին կապուած է, այն ատեն Պլոտինոս կը պահանջե՞ խուսափիլ մարմնական ցանկութիւններու հետապնդումէն: Երկրային ճակատագրերու հանդէպ Պլոտինոս ընդհանրապէս սառնարիւնութեամբ կը վերաբերէր, որովհետեւ, ոչ մէկ դէպք կամ իրադարձութիւն, այնքան կարեւոր պիտի թուի, որ փիլիսոփային համար օրինական պատճառ հանդիսանայ, որ ան իր հաւասարակշռուած վերաբերմունքէն կամ դիրքաւորումէն հրաժարի: Արտաքին իրերը երջանկութեան (յուն.՝ eudaimonia) համար անկարեւոր են: Երջանկութիւնը հիմնուած է ւելի «կատարեալ կեանքի» մը վրայ, որ իրագործուած է փիլիսոփայական ապրելակերպով: